# «ՀՀ կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ

ՀՀ կառավարության որոշման սույն նախագծով նախատեսվում են իրականացնել հանրակրթական ուսումնական հաստատությունների օրինակելի կանոնադրության մեջ փոփոխություններ և լրացումներ, որոնք փոխկապակցված են «ՀՀ կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 319-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծում ամրագրված դրույթների հետ:

Քննարկվել է
21.06.2020 - 07.07.2020

Տեսակ
Որոշում

Ոլորտ
Կրթություն և գիտություն

Նախարարություն
Կրթության, գիտության,մշակույթի և սպորտի նախարարություն

| հ/հ | Առաջարկության հեղինակը, ստացման ամսաթիվը | Առաջարկության բովանդակությունը | Եզրակացություն | Կատարված փոփոխությունը |
|---|---|---|---|---|
| | 1 | 2 | 3 | 4 |
| 1 | Վեներա Աբովյան30.06.2020 08:37:17 | Տնօրեն պետք է ընտրեն պրիֆեսիոնալները: Մենք դեռս չունենք այն որակի կառավարման խորհուրդներ, որոնք տնօրենին ընտրեն ըստ զարգացման ծրագրի կամ անցած ուղու: Ընտրելու են իրենց դպրոցում աշխատածին, անկախ հավակնորդների ծրագրերի: Առաջարկում եմ տնօրենների ընտրության համար ստեղծել միասնական մարզային կամ տարածքային պրոֆեսիոնալ խորհուրհուրդ, որտեղ կներառվեն կրթության ոլորտի մարդիկ, ովքեր նախապես կվերապատրաստվեն ու կընտրեն ըստ համապատասխան չափանիշների՝ չունենալով ուրէ շահագռգռվածություն կամ շահ | Չի ընդունվել: | Ներկայացված նախագիծը հաստատելու իրավասությունը ամրագրված է օրենքով: |
| 2 | Գայանե Վարդանյան02.07.2020 16:25:08 | Հիմա տնօրենը նշանակում են : Ու սա ոչ ոք չի կարող առարկել: Ձևական են մրցույթները: Ընտրողներից շատերը չեն են պատկերացնում ինչ է դպրոցի զարգացման ծրագիրը: Ճիշտ կլինի մրցույթից մի քանի օր առաջ արագ կազմվի հանձնաժողով ու ընդգրկվեն պրոֆեսիոնալներ տարբեր մարզերից:Միգուցե այդժամանակ ամեն ինչ արդար լինի: | Չի ընդունվել: | Տնօրենի ընտրության (նշանակման) կարգը հաստատվում է ,Հանրակրթության մասինե ՀՀ օրենքով լիազորված նորմով: |
| 3 | Վահրամ Սողոմոնյան05.07.2020 12:12:26 | Առաջարկում եմ ներառել հետևյալ դրույթը. ,Հավակնորդը պարտավոր է ապահովել իր հայտի, զարգացման ծրագրի և ներկայացվող փաստաթղթերի համապատասխանությունը դպրոցի կանոնադրության ,Դպրոցի գործունեության առարկան և նպատակըե գլխում սահմանված ժողովրդավարության, մարդասիրության, հանրամատչելիության, թափանցիկության, անձի ազատ զարգացման, ինքնավարության և կրթության աշխարհիկ բնույթի պահպանման, ինչպես նաև ազգային և համամարդկային արժեքների զուգորդման սկզբունքներին:ե | Չի ընդունվել: | Ներկայացված մեջբերումը վերաբերում է դպրոցի գործունեությանը, իսկ առաջարկը՝ փաստաթղթերի համապատասխանությանը: Առկա է հակասություն: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 4 | Վահրամ Սողոմոնյան05.07.2020 12:12:26 | Ավելացնել փաստաթղթերի ցանկում՝ մոտիվացիոն նամակի առկայությունը, ինչպես նաև կցված մասնակցային գործունեության և քաղաքացիական ներգրավվածության մասին վկայող /հավաստող փաստաթղթեր կամ նյութեր: | Ընդունվել է ի գիտություն: | Լրացուցիչ կքննարկվի: |
| 5 | Վահրամ Սողոմոնյան05.07.2020 12:58:03 | Առաջարկվում է ներառել հետևյալ դրույթը. ,Դպրոցի կառավարման խորհրդի անդամը՝ իրավունք ունի ծանոթանալ դպրոցի ֆիզիկական պայմաններին, դպրոցի աշխատանքային փաստաթղթերին, հանդիպել դպրոցի մասնակցային խորհուրդների հետ և նախաձեռնություններ ներկայացնել կառավարման խորհրդի նիստին: Դպրոցի տնօրինությունն այդ նպատակով աջակցում է կառավարման խորհրդին:Ե | Չի ընդունվել: | Առաջարկը ներկայացված նախագծի էությանը չի վերաբերում: |
| 6 | Վահրամ Սողոմոնյան05.07.2020 12:58:03 | Առաջարկվում է ներառել հետևյալ դրույթը. ,Տնօրինությունը իրազեկում է դպրոցի բոլոր խորհուրդների նիստերի մասին և հնարավորություն է ստեղծում Կխ անդամների համար դպրոցի ծնողական խորհրդի և մանկավարժական խորհրդի նիստերին դիտորդի կարգավիճակով մասնակցելու համար: Տնօրինությունը ապահովում է դպրոցի խորհուրդների և կառավարման խորհրդի միջև տեղեկատվության փոխանակումը:Ե | Չի ընդունվել: | Խորհրդի անդամի պարտավորությունները սահմանված են ՀՀ կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշմամբ: |
| 7 | Վահրամ Սողոմոնյան05.07.2020 12:58:03 | Լրացուցիչ կարգավորումներ դպրոցի խորհուրդների և տնօրինության թափանցիկ, հաշվետու և մասնակցային աշխատանքի համար՝ ¬ Խորհուրդների նիստերի մասին տեղեկատվությունը բաց հայտարարությամբ տեղադրել դպրոցի կայքէջում: Ծխ և Մխ նիստերին մասնակցության հնարավորություն ստեղծել դպրոցի բոլոր ծնողների, մանկավարժների, ինչպես նաև լիազոր մարմնի և կրթության ոլորտի հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների համար: ¬ Ընդունել Ծխ օրինակելի կանոնադրություն՝ կանոնակարգելու Ծնողական խորհրդի որպես մասնակցային մարմնի արդյունավետ գործունեությունը, օրինակ, քանի որ ներկայումս սահմանված են միայն ծնողական ժողովների հրավիրման ժամկետները (4 և 2), իսկ ծնողական խորհուրդների նիստերի հրավիրման | Մասնակի ընդունվել է: | Ներկայացված առաջարկները լրացուցիչ կքննարկվեն: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | ժամկետները սահմանված չեն: ¬ Կխ, ինչպես նաև Ծխ և Ախ անդամների համար կազմակերպել պարբերական վերապատրաստումներ պետական և հասարակական կազմակերպությունների կողմից: ¬ ԿԳՄՍՆ կողմից խորհուրդներում սեփական ներկայացուցիչների և համայնքի ներկայացուցիչների համար կազմակերպել հետադարձ կապին ծառայող հանդիպում-քննարկումներ՝ լիազոր մարմնի քաղաքականությանը ծանոթացնելու և խորհրդի անդամների կարծիքներին ծանոթանալու համար: | | |